



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և

կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

գլխավոր տնօրեն, ք.գ.թ.

ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՆՅԱՆ

«02» հունիսի 2023թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ ՈՒ Թ Յ Ա Ն

**Նաիրա Ստյոպայի Մելքոնյանի
«Առանձին կառավարելի վարակների համաճարակաբանական հսկողության և
իմունականխարգելման բնութագիրը Հայաստանում»
ԺԴ.00.16 - «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Մանրէային, վիրուսային և մակաբուծային բնույթի կենսաբանական գործոններով պայմանավորված հիվանդություններն առ այսօր մարդու ախտաբանությունում ունեն զգալի նշանակություն: Վերջինների զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը, կանխարգելումը կարևորվում է ինչպես ազգաբնակչության առողջության պահպանման, հաշմանդամության և մահաճության իջեցման, այնպես էլ երկրի տնտեսական իրավիճակի բարելավման և անվտանգության ապահովման առումով: Համաճարակային իրավիճակի առավելագույնս նորմալացման և հսկման, վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող բոլոր գործոնների վրա արդյունավետ ազդելու համար անհրաժեշտ է վարակների համաճարակային գործընթացի երկարաժամկետ շարունակական հետազոտությունների ընդլայնում: Կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման գիտականորեն հիմնավորված ռազմավարությունը նպաստում է հանրային առողջության ոլորտում դրական տեղաշարժերի՝ ապահովելով բնակչության կենսաբանական և հակահամաճարակային անվտանգությունը:

Իմունականխարգելումը հանդիսանում է կառավարելի վարակների համաճարակաբանական հսկողության հիմնական և տնտեսապես արդյունավետ բաղադրիչը: Սկսած XX դարի երկրորդ կիսամյակից առ այսօր, պատվաստանյութերի ստեղծման ու լայն կիրառուման շնորհիվ կանխվել են միլիոնավոր մահվան, այդ թվում մանկական, հաշմանդամության և անաշխատունակության զարգացման դեպքեր: Բշկագիտության և մոլեկուլային կենսաբանության զարգացումը նպաստում է պատվաստանյութերի ստեղծման ժամանակակից տեխնոլոգիաների մշակման և վարակիչ հիվանդությունների դեմ, այդ թվում նոր, նորագույն պատվաստանյութերի արագ մշակման և ներդրման:

ԱՀԿ-ի կողմից առաջարկվող պատվաստանյութերի օգտագործումն առանձին երկրներում կարող է ունենալ ներդրման առանձնահատկություններ: Յուրաքանչյուր երկրում ցանկացած պատվաստանյութի արդյունավետության գնահատման գործընթացում նպատակահարմար է և անհրաժեշտ տվյալ վարակի համաճարակաբանական գործընթացի ուսումնասիրության և մշտադիտարկման իրականացումը: Ելնելով վերոգրյալից, ակներև է գրախոսվող ատենախոսական աշխատանքի, որը նվիրված է Հայաստանում առանձին կառավարելի վարակների համաճարակաբանական հսկողության և իմունականխարգելման գործընթացի ուսումնասիրման, կարևորությունը և արդիականությունը:

Ատենախոսության բովանդակությունը և ձևավորման գնահատականը

Ատենախոսությունը ներկայացված է ընդունված դասական ձևով, շարադրված է 128 էջում, կազմված է ներածությունից, «Գրականության տեսություն» գլխից (4 ենթագլուխներով), «Նյութը և մեթոդները» գլխից, սեփական հետազոտությունների 4 գլխից, ստացված արդյունքների քննարկումից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (179 գրական աղբյուր): Հետազոտության արդյունքները պատկերված են 14 աղյուսակում և 36 նկարում:

Հետազոտվող հիմնախնդրին լիովին տիրապետումը թույլ է տալիս հեղինակին գրագետ հիմնավորել աշխատանքի արդիականությունը, ներկայացնել աշխատանքի նպատակը և ձևավորվել հետազոտության 4 խնդիրները:

«Գրականության տեսություն» գլխի 4 ենթագլուխներում հեղինակը՝ ելնելով ատենախոսության նպատակից և խնդիրներից, նկարագրում է, կարմրուկի, կարմրախտի համաճարակաբանական իրավիճակը աշխարհում և համաճարակաբանական հսկողությունը դրանց վերացման փուլում, վիրուսային հեպատիտ Բ վարակի տարածվածությունը և իմունականխարգելման ժամանակակից մոտեցումները, ռոտավիրուսային վարակի համաճարակային պրոցեսի առանձնահատկությունները և կանխարգելումը, նոր պատվաստանյութերի ներդրումը ԱՀԿ անդամ երկրների իմունականխարգելման ծրագրերում և հետներդրումային գնահատումը: Տվյալների շարադրումը վկայում է, որ հայցորդի կողմից մանրամասն ուսումնասիրվել է գրականության նյութը:

Իրականացվող համաճարակաբանական հետազոտություններին հեղինակը ցուցաբերել է մեթոդաբանորեն գրագետ մոտեցում, ինչը ներկայացված է «Նյութը և մեթոդները» գլխում: Նյութի վիճակագրական մշակման մեթոդները համապատասխանում են ժամանակակից մոտեցումներին: Որպես աշխատանքի դրական կողմ, հարկ է նշել ատենախոսի կողմից բավականին մանրամասն ներկայացված հետազոտվող առանձին վարակների (կարմրուկ և կարմրախտ, վիրուսային հեպատիտ Բ, ռոտավիրուսային վարակ, մանրէային մեննիգոկոկներ) համաճարակաբանական գործընթացի վերլուծության վիճակագրական մոտեցումները:

Աշխատանքի ընթացքում իրականացված հետազոտությունները ճշգրիտ խմբավորված և շարունակաբար շարադրված են սեփական հետազոտությունների չորս գլուխներում: Այսպես, մանրամասն ներկայացվել է Հայաստանում կարմրուկի, կարմրախտի համաճարակաբանական հսկողության բնութագիրը և իմունականխարգելումը դրանց վերացման փուլում, վիրուսային հեպատիտ Բ վարակի տարածվածությունը և իմունականխարգելման ժամանակակից մոտեցումները, ռոտավիրուսային վարակի համաճարակաբանական առանձնահատկությունները և կանխարգելումը, նոր պատվաստանյութերի ներդրումը և հետներդրումային գնահատումը: Վարակների համաճարակաբանական գործընթացի բնութագրումն, ինչպես նաև իմունականխարգելման գործընթացի գնահատումը, Ն.Մելքոնյանի կողմից

իրականացրել է բոլոր անհրաժեշտ ցուցանիշների թվային արժեքների վերլուծությամբ:

Աշխատանքի հիմնական արդյունքները մանրամասն շարադրված և քննարկված են «Ստացված արդյունքների քննարկում» գլխում: Եզրահանգումներում ներկայացված է հեղինակի կողմից առաջադրված խնդիրների լուծումը:

Ատենախոսության արդյունքների գիտական նորույթը և գործնական

նշանակությունը

Ակնհայտ է գրախոսվող աշխատանքի գիտական նորույթն, այն է՝ առաջին անգամ ՀՀ-ում իրականացվել է որոշ կառավարելի վարակների (կարմրուկ, կարմրախտ) համաճարակաբանական հսկողության և իմունականխարգելման գործընթացի որակի զուգահեռ գնահատում, պարզաբանվել է ներդրված նոր պատվաստանյութերի ազդեցությունն իմունականխարգելման ընդհանուր գործընթացի վրա: Նորովի մոտեցում է ցուցաբերվել հղիների շրջանում ներդրված հեպատիտ Բ-ի համաճարակաբանական հսկողության և նորածինների շրջանում հեպատիտ Բ-ի պատվաստման գործընթացի գնահատման:

Ատենախոսը ներկայացրել է արժեքավոր գործնական առաջարկներ՝ ուղղված ուսումնասիրվող կառավարելի վարակների համաճարակաբանական հսկողության համակարգի և իմունականխարգելման գործընթացի բարձր մակարդակի պահպանման: Ուշույն էլ է, որ որոշ գործնական առաջարկներն արդեն ներդրվել են «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրում գործողությունների ստանդարտ ընթացակարգերի և ուղեցույցների ձևով: Կարևոր ներդրում պետք է համարել նաև հեղինակի կողմից հրատարակված ուսումնական ուղեցույցը:

Սեղմագրի համապատասխանությունը

ատենախոսության հիմնական դրույթներին

Ատենախոսության սեղմագրում և 15 տպագրված գիտական աշխատանքներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Սեղմագիրը կազմված է 26 էջից, ներառյալ ռուսերեն և անգլերեն համառոտ ամփոփումները:

Բարձր գնահատելով գրախոսվող աշխատանքը, ակնկալում ենք հայցորդի պատասխանը հետևյալ հարցերին.

1. Ինչ՞ տվյալներ կան կատարված հետազոտության ընթացքում հայտնաբերված HBsAg դրական հղիներից ծնված երեխաների հետագա հսկողության վերաբերյալ:
2. Արդյոք՞ կատարվել են շճաբանական հետազոտություններ հեպատիտ Բ-ի ակտիվ և պասիվ իմունականխարգելում ստացած երեխաների մոտ հակամարմինների մակարդակը որոշելու համար:
3. Կան՞ արդյոք ավելի լայնածավալ հետազոտություններ մեծահասակների շրջանում ռոտավիրուսային վարակի տարածվածության վերաբերյալ:


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերը շարադրվածը, ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ Նաիրա Ստյոպայի Մելքոնյանի «Առանձին կառավարելի վարակների համաճարակաբանական հսկողության և իմունականխարգելման բնութագիրը Հայաստանում» ԺԴ.00.16 - «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, թեմայի արդիականությամբ, նյութի ծավալով, ժամանակակից մեթոդաբանական մոտեցումներով, ստացված արդյունքների գիտական նորույթով և գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է միաձայն ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդում (02.06.2023թ., արձանագրություն թիվ 3):

Նիստին ներկա էին՝ բ.գ.թ. Ա.Վանյանը (խորհրդի նախագահ), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր Յու.Ալեքսանյանը (նախագահի տեղակալ), բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Մելիք-Անդրեասյանը, բ.գ.թ. Ա.Քեչիշյանը, բ.գ.թ. Կ.Գյուրջյանը, բ.գ.թ. Ա.Ցականյանը, բ.գ.թ. Տ.Խաչատրյանը:


ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի գիտական մասով տնօրենի տեղակալ, բ.գ.դ., պրոֆեսոր



Գայանե Մելիք-Անդրեասյան

Գայանե Մելիք-Անդրեասյանի ստորագրությունը հաստատում եմ

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակազմի քարտուղար



Նարինե Կարախանյան

02.06.2023թ.

